ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2017 թվականի N 257-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, 84-րդ հոդվածի 2-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 40-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի 2018 թվականի բյուջեի և համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:

2. Հաստատել Ջրվեժ համայնքի 2018 թվականի բյուջեի և համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:

3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Ջրվեժ համայնքի ղեկավարին կից «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման» խորհրդակցական մարմնի անդամ Անահիտ Մարգարյանին:

4. Հանձնարարել Անահիտ Մարգարյանին՝ համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական զարգացման ծրագրում տեղադրել Ջրվեժ համայնքի 2018 թվականի բյուջեի և համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար.

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից Անահիտ Մարգարյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 4
գ. Ջրվեժ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի գյուղական
համայնքի ղեկավարի 2017 թվականի
դեկտեմբերի 4-ի N 257-Ա որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Ջրվեժի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2017 թվականի դեկտեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 20-ը ներառյալ կազմակերպվող Ջրվեժ համայնքի 2018 թվականի բյուջեի և համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Ջրվեժ համայնքի 2018 թվականի բյուջեի և համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կարող են մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնվել համացանցային կայքերում (jrvezh-kotayq.am; www.jrvezh.am), հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկվել համապատասխան էլեկտրոնային հասցեով (jrvezh.kotayq@mta.gov.am), ինչպես նաև կարող են գրավոր ներկայացվել Ջրվեժի համայնքապետարան:

Հանրային քննարկումների բաց լսումները տեղի կունենան՝

1. Ջրվեժ համայնքի Զովք գյուղում՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ին, ժամը 12:00-ին, վարչական ղեկավարի նստավայրում, հասցեն՝ գյուղ Զովք, Գլխավոր խճուղի, թիվ 16:

2. Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ին, ժամը 14:00-ին, վարչական ղեկավարի նստավայրում, հասցեն՝ գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց, թիվ 21:

3. Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղում՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ին, ժամը 17:00-ին, Ջրվեժի համայնքապետարանում, հասցեն՝ գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, թիվ 76:

Լսումներին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 17-ը ներառյալ ներկայացնել դիմում:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010-644929 հեռախոսահամարով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2017 թվականի N 258-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Արման Գևորգի Նազարեթյանի ընտանիքին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժի 46-րդ փողոցի թիվ 58 հասցեի տնամերձ հողակտորում բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Քաղաքացի Արսեն Ալբերտի Մկրտչյանի ընտանիքին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժի 46-րդ փողոցի թիվ 60 հասցեի տնամերձ հողակտորում բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Սուսաննա Թադևոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2017 թվականի N 259-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. «ԲԱՐԻ ՄԱՄԱ» բարեգործական հասարակական կազմակերպությանը, նախագահ՝ Մարինե Միսակի Ադուլյան, տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող Ջրվեժի Այգեգործական 6-րդ թաղամասի թիվ 1/2 հասցեի հողակտորում բարեգործական ներառական և տյուտոր կենտրոնների կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել Սուսաննա Թադևոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2017 թվականի N 260-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Վարդան Աշոտի Առաքելյանի ընտանիքին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժի 46-րդ փողոցի թիվ 62 հասցեի տնամերձ հողակտորում բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Քաղաքացի Արամ Յուրիկի Հարությունյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժի 46-րդ փողոցի թիվ 62/1 հասցեի տնամերձ հողակտորում բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Սուսաննա Թադևոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«5» դեկտեմբերի 2017 թվականի N 261-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սարգիս Վաղինակի Աբաջյանի (ծնված՝ 1950 թվականի հունիսի 15-ին), Անահիտ Բրսոյանի (ծնված՝ 1961 թվականի օգոստոսի 23-ին), Լուսինե Մկոյանի (ծնված՝ 1982 թվականի հուլիսի 11-ին), Սոֆիկ Կարապետյանի (ծնված՝ 1983 թվականի դեկտեմբերի 14-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժի Մելքոնյան փողոցի թիվ 86 հասցեի հողակտորում (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի վկայական N 721507, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2001 թվականի մայիսի 18-ին և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 1-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները և բաժանելու նշված հասցեի հողակտորը երկու առանձին մասերի:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Սարգիս Աբաջյանը, Անահիտ Բրսոյանը, Լուսինե Մկոյանը, Սոֆիկ Կարապետյանը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժի Մելքոնյան փողոցի թիվ 86 հասցեի հողամասում 2002 թվականին ինքնակամ կառուցել են՝ պարիսպ, զուգարան և հենապատ՝ 18,5 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Սարգիս Աբաջյանին, Անահիտ Բրսոյանին, Լուսինե Մկոյանին, Սոֆիկ Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Մելքոնյան փողոցի թիվ 86 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Սարգիս Աբաջյանին, Անահիտ Բրսոյանին, Լուսինե Մկոյանին, Սոֆիկ Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Մելքոնյան փողոցի թիվ 86 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2. Սարգիս Վաղինակի Աբաջյանի ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Մելքոնյան փողոցի թիվ 86 հասցեից բաժանված S_1=614,9 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, թիվ 86, S_2=272,4 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, թիվ 86/1:

3. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 28 860 (քսանութ հազար ութ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 5
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» դեկտեմբերի 2017 թվականի N 262-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Ավետիս և Արտյոմ Հովհաննեսի Մարգարյաններին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժի 33-րդ փողոցի թիվ 7 հասցեի տնամերձ հողակտորում մասամբ նկուղային և մանսարդային հարկերով երկհարկանի բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել Սուսաննա Թադևոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 6
գ. Ջրվեժ